



Ե. ՇԱՀԱՋԻՋ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒՄՈՒՇԽԱՆՆԵՑԻ



անվել ծայրագույն վարդապետ Շահինյանը ծնվել է 1768 թվին՝ Արևմտյան Հայաստանի Գյումուշխանե քաղաքում, որի անունով էլ կոչվել է Գյումուշխանեցի: Նա աշակերտել է Ամասիա քաղաքի առաջնորդ՝ Սեբաստացի Հովհաննես արքեպիսկոպոսին, որի «Սրբազնագործ Աշուլն» էլ տարիներ հետո, 1796 թվին Ամասիայում ձեռնադրվել է արքեպիսկոպոս և ապա վարդապետ:

1797 թվին վախճանվում է նրա ուսուցիչ և երախտավոր հայր Հովհաննես արքեպիսկոպոսը: Վերջինիս մահվանից հետո Գյումուշխանեցին թողնում է իր հայրենիքը և մեկնում Պոլիս, որտեղ նրան սիրով ընդունում է ժամանակի Զաքարիա պատրիարքը: Բայց շուտով վախճանվում է նրա և այս

երկրորդ երախտավորը՝ Զաքարիա պատրիարքը ու նրա փոխարեն պատրիարք է ընտրվում էջմիածնի միաբան Դանիել արքեպիսկոպոս Բայազեդցին, որն այդ ժամանակ էջմիածնի նվիրակի պաշտոնով ժամանակավորապես Պոլսում էր գտնվում և պատրաստվում էր էջմիածին վերադառնալու:*)

1797 թվին էջմիածնում վախճանվում է նաև կարնեցի Ղուկաս կաթողիկոսը: Վանքի միաբանության ժողովում կաթողիկոս է ընտրվում Դանիել պատրիարքը, բայց Սիմեոն Նրևանցու աշակերտ, Ռուսաստանի Հայոց նվիրակ Հովսեփ արքեպիսկոպոս Արղուսյանը, Պոլսի ռուսաց դեսպան Բամարովի զորեղ ազդեցությունից, «շորթում» է Դանիելից նրա կաթողիկոսական դասը և իրեն՝ Դանիելին էլ աքսորելու պատճառ դառնում «ի Պոճճա-աղայն» (Տենեդոս կղզին), ուր

*) 1793 թվին կարնեցի Ղուկաս կաթողիկոսը Զմյուռնայի վիճակի առաջնորդ ու կաթողիկոսական նվիրակ է կարգում Դանիել եպիսկոպոսին: Վերջինս նկատելով ավագ սարկավագ ներսես Աշտարակեցու աչքաբացությունը, խնդրում է իրավունք տալ նրան ևս իր հետ տանելու: Իրավունք տրվում է և երկուսով միասին մեկնում են Զմյուռնա: Այստեղ 1794 թվի սեպտեմբերի 24-ին Դանիելը ներսեսին արքեպիսկոպոս է ձեռնադրում ու նվիրակի պաշտոնով ուղարկում Ելլադա, Մուդափիա և Վալահիա, ուր մնում է նա հրեք տարի: Այդ միջոցին խռովություն է ծագում ժողովրդի և Դանիելի միջև ու վերջինս 1797 թվին ստիպված է լինում Զմյուռնան թողնել և Պոլիս մեկնել: Հուլիսի 1-ին հոտի հետ Զաքարիա պատրիարքի միջնորդությամբ հաշտվել: Բայց ոչ պատրիարքի միջնորդությունը և ոչ էլ կաթողիկոսի կոնդակները չեն ազդում Զմյուռնացու վրա:

Այնուհետև կաթողիկոսը կեսարացի Մարտիրոս եպիսկոպոսին ուղարկում է նրանց հաշտեցնելու և պատվիրում է, որ եթե հաշտությունը զրույս չգա, ինքը՝ Կեսարացին կմնա Զմյուռնայի առաջնորդ, իսկ Դանիելը կմեկնի Ռումելիա նվիրակի պաշտոնով: Հաշտությունը չի կայանում և Դանիելը մեկնում է Ռումելիա: Մի տարի Ռումելիայում մնալուց հետո նա վերադառնում է Պոլիս, ուր երեք տարի լրանալուց հետո, վերադարձած է լինում նաև ներսես Աշտարակեցին: Դանիելը մտադիր էր ներսեսի հետ միասին մերադառնալ էջմիածին: սակայն Պոլսի ամիրաները արգելք են հանդիսանում, որոշած լինելով Դանիելին պատրիարք ընտրելու Զաքարիայի մահից հետո, որն այդ ժամանակ մերձիմաս հիվանդ էր:

1799 թվի մարտի 11-ին Զաքարիան վախճանվում է: պատրիարք է ընտրվում Դանիելը, որը ներսեսին իբրև «փոխար» պատվում է իր մոտ:

ուղեկցում է նրան ու սպասավորում Գյումուշխանեցին:

Դանիելի արքորը տեսնում է ինն ամիս. արքորից ազատվելով նա Գյումուշխանեցու հետ միասին գալիս է Ռորաթ. այստեղ լրտում է Հովսեփի Ռիֆլիսում անակնկալ մահանալու լուրը և ուղեորվում է էջմիածին, բայց դեռ Բայազեդ չհասած տեղեկանում է, որ Պարսից կառավարության ցանկությանը Դավթի արքեպիսկոպոս Ղորղանյանն արքեն կաթողիկոս է օծվել. չնայած էջմիածնի միաբանության ընտրողական ժողովը Հովսեփի մահից հետո էլ վերստին կաթողիկոս է ընտրած եղել իրեն՝ Դանիելին: Եվ այստեղից էլ էջմիածնում սկիզբ են առնում հայտնի «Դավթի-Դանիելյան կոնվենիցիան», որոնք հրահրվել են այդ ժամանակ Հայաստանին տիրող Պարսից ու Օսմանյան պետությունների և տիրել ցանկացող հզոր Ռուսաստանի կողմից: Ռուսները սկսում ցանկանում էին կաթողիկոսական գահի վրա բազմած տեսնել իշխան Հովսեփի ներկայաբազուկ Արղուսյան արքեպիսկոպոսին, իսկ

սրտ մահից հետո էլ սկսեցին հակվել Դանիելի կողմը, իմանալով որ նա ուսաներին համակրողներից է: Սակայն պարսիկները ուսաների հանդեպ այն առավելությունն ունեին, որ տիրելով Արևելյան Հայաստանին, — նրանին, էջմիածնին, Նախիջևանին, Օրդուբադին և մյուս տեղերին, հնարավորություն ունեին անմիջապես իրենց կամքը թելադրելու էջմիածնին:*)

Դանիելը Բայազեդում մնալով՝ իր ձեռնասուն, վստահելի ու աջաբաց Գյումուշխանեցուն ուղարկում է Պոլիս, որպեսզի Պոլսի բարեկամների միջոցով Դավթին տրված բերատ-ֆերմանը իր անունով փոխել տան Սուլթանին, որ և հաջողվում է ներսես Աշտարակեցու օգնությամբ: Այսպիսով Գյումուշխանեցու սպասարկումը Դանիելին սոսկ պարզ ու հավատարիմ սպասարկում չի հանդիսացել, այլ և օգտավետ մասնակցություն նրա հաջողության, ձախորդության, ուրախության ու վշտակցության:

1802 թվին Գյումուշխանեցին վայելելով

*) «Դավթի-Դանիելյան» կառավարությունների հիշատակները հիման վրա գրված պատմությունը տակավին մենք չունենք. մեր եկեղեցական պատմության մեջ այս ցավալի իրադարձությունների մասին տարբեր եղանակներով են պատմվում և այնպես խառն, որ հաճախ դժվար է լինում որոշել, թե այս կամ այն կարևոր գործն ո՞վ, ե՞րբ, ո՞րտեղ և ի՞նչպիսի հանգամանքներում է կատարել: Օրինակ Գյումուշխանեցու ինքնակենսագրությունից չի պարզվում, թե ներսես Աշտարակեցին ի՞նչ դեր է խաղացել Սուլթանի բերատի փոփոխման գործում: Կատարված իրադարձություններից սակայն պարզվում է, որ Աշտարակեցին Դանիելի պատրիարք ընտրվելուց առաջ կամ հետո վերադարձած է եղել Պոլիս և «վիզար» կոչմամբ հանդիսացել է պատրիարքի օգնականը. պարզվում է նաև, որ ներսեսը Դանիելի մոտ է եղել և Գյումուշխանեցուն բերատի գործով Պոլիս ուղարկելուց հետո, Աշտարակեցուն էլ շուտով ուղարկել է նույն գործով այնտեղ:

Սկզբում նրանց չի հաջողվել բերատը փոխել տալ, որովհետև Դանիելից հետո ընտրված Չամաշքյան Հովհաննես պատրիարքը Դավթի կողմնակիցը և Դանիելին էլ արքորել տվողն է եղել: Աշտարակեցուն և Գյումուշխանեցուն հաջողվում է պատրիարքին հեռացնել և նրա փոխարեն պատրիարք

ընտրել տալ խամսեցի Գրիգոր եպիսկոպոսին. վերջինիս միջոցով էլ նրանք ստանում են ցանկալի հրովարտակը ու տանում Դանիելին, որը Դավթից վախենալով Բայազեդից փախել էր Կարին:

Դանիելը Սուլթանի բերատն ստանալուց հետո արձակ համարձակ վերադառնում է Բագրևանդի «Ռաբրիխես» կոչված Ս. Հովհաննու վանքը, ուր մեծ հանդիսավորությամբ կաթողիկոս օծվելով նգովում է հակաթոռ Դավթին 1802 թ. մայիսի 25-ին: Լ

Այս համառոտ ծանոթագրությունը շերտաբանելու համար, այսքանը միայն կասենք, որ երկու իրար դեմ պայքարող կողմերն էլ խաղալիք ու գործիք հանդիսանալով վերը հիշված պետությունների ձեռքին, միմյանց վնասելու գործողություններում ծայրահեղություն չդնելով. դրա հետևանքն այն է լինում, որ ազգն ու էջմիածինը շարաշար տուժում են և բարոյապես և նյութականապես: Ցարական Ռուսաստանի բռն նպատակն էր Անդրկովկասում իր սահմաններն ընդարձակելով հասցնել այն Երասխ գետին, իսկ Դանիելին կաթողիկոսական գահ բարձրացնելը ու էջմիածնին օգնելը արվել է զի միջի ալլոցը, հայերի համակրությունը շահելու համար:

էջմիածնի միաբանութեան մատահոթութեամբ, նրա կողմից, իբրև սուրհանդակ, բազմաթիվ կարևոր թղթերով ուղարկվում է Պետերբուրգ՝ Ձորագեղցի Եփրեմ արքեպիսկոպոսի մոտ, որը Հովսեփ Արղությանից հետո ուսումնասիրող նվիրակ էր կարգվել։ Եփրեմը Գյումուշխանեցուն պահում է իր մոտ՝ առաջնորդանիստ Հաշտարխանում որպես օգնական, իսկ 1804 թվին նրան Գրիգորիոսով հալաքադարի հաջորդ է կարգում, հանձնարարելով Հովսեփի սպասավոր Ալեքսանդրի Գրիգոր եպիսկոպոսից հաշիվ պահանջելու։

1809 թվին Գանիկը վախճանվում է։ Կաթողիկոս է ընտրվում Ռուսահայոց նվիրակ Եփրեմ արքեպիսկոպոսը, որը, նախքան էջմիածին մեկնելը, Գյումուշխանեցուն իր հետ առնելով ուղևորվում է Պետերբուրգ և ներկայանում կայսեր. այստեղ Գյումուշխանեցին պարգևատրվում է կայսեր կողմից աղամանդադարդ խաշով։ Պետերբուրգից վերադառնալուց հետո Եփրեմը մեկնում է էջմիածին, իսկ Գյումուշխանեցին՝ Գրիգորիոսով, իր հաջորդության պաշտոնավայրը, որ վերոհիշյալ Գրիգոր եպիսկոպոսից հաշիվ պահանջելով ստանում է հինգ սնդուկ ռհնդու ապրանք և որպես նախնականցոց սեփականություն ուղարկում նրանց. նաև բաց է անում ռուսումնարան, կառուցում հաջորդարան. բայց նոր հաջորդարան տեղափոխվելուց դեռ մի ամիս չանցած ստանում է Եփրեմի փոխարեն Ռուսահայոց առաջնորդ կարգված Գառնակեղյան Հովհաննես արքեպիսկոպոսի հրամանը Գրիգորիոսովի հաջորդությունը թողնելու և վանահոր պաշտոնով Ղրիմի Ս. Խաչ վանքը փոխադրվելու մասին, պատվեր ունենալով գաղթական բուլղարների կողմից խլված վանքապատկան հողերը ետ առնելու։

Ս. Խաչ տեղափոխվելով Գյումուշխանեցին բարեգարդում է վանքը, 15 տարի շարունակ դատարանների շեմքերը մաշելով ետ առնում խլված հողերը, Ղարասու քաղաքում դպրոց բաց անում և 1819 թվին այդ դպրոցի աշակերտներից 8 հոգու ուղարկում Մոսկվա՝ Լազարյան ձեմարանը, միաժամանակ 62 հատ հին լուսիր ձեռագիր մատյաններ ընծայելով՝ ձեմարանին։ Նա իր ժրաջան գործունեությամբ և առաքինի վարքով գրավում է ժողովրդի սերն ու համակրանքը, վանքում իրեն համար բարեկեցիկ կյանք ստեղծելով. դրա համար էլ երբ 1827 թվին ստանում է Եփրեմ կաթողիկոսի և Ներսես Աշտարակեցու հրավերը՝ էջմիածին վերադառնալու, նա դժվարանում է թողնել Ղրիմը, որտեղ ջատ

մտերիմ բարեկամներ էր ձեռք բերել։

Գյումուշխանեցին էջմիածին է հասնում ուսանողի կողմից նրա գրավման երրորդ օրը (հոկտ. 3 1827 թ.). վանքը գտնվում էր ծանր կացության մեջ, միաբանները ցիր ու ցան, նյութական կարիքը մեծ. իսկ որ ամենագրվելու է, բացակայում էր ղեկավարող ձեռքը, որովհետև Եփրեմ կաթողիկոսը դեռ Թիֆլիսից չէր վերադարձել։ Ներսես Աշտարակեցուն նա գտավ մեծ մտահոգության մեջ. Ներսեսը պետք է կառավարեր և՛ վանքը և՛ նորանվաճ երկիրը և՛ տառապյալ ժողովրդի բազմաթիվ կարիքները հոգար ամեն տեղ։ Նա ձեռնարկել էր վանքի եպիսկոպոսներից և վարդապետներից «Սինոդ» կոչված ղեկավար մարմնի կազմակերպման գործին և նոր ժամանած Գյումուշխանեցուն էլ անդամ է կարգում, թեև մյուս անգամների վնասաբեր ճանձնաշահության առաջնառնելու հույսով։ Դրանից հետո, ինչպես հայտնի է, Ներսեսը 1828 թվի աշնանը ստիպված է լինում ամեն ինչ թողնել ու պատվավոր աքսոր գնալ Բեսարաբիայի Քիշինև քաղաքը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդի անվան տակ։

Կարճ ժամանակ անց Գյումուշխանեցին նկատում է Սինոդի անդամների վնասարարությունը. այդ վնասարարությունը կասեցնելու մի քանի անհաջող փորձերից հետո նա ստիպված է լինում քանիցս խնդրելու, որ իրեն ազատեն անդամությունից, որպեսզի գտնի իր խղճի առաջ պատասխանատու շնա կամ ինչպես ինքն է ասում՝ «թերևս ազատ լինիցիմ ի խղճէ վնասու Աթոռոյն»։ սակայն ազատելու փորձարեն 1828 թվի փետրվար ամսին նրան աքսորում են Խոր-Վիրապ և ինչպես ինքն է ասում՝ «մտած լինելով վանք, ըստ օրինի, վեղարով, դուրս եկալ այդտեղից մորթեալ գդակ փափախով»։

Գրիգոր Լուսավորչի «Խոր-Վիրապ» կոչված վանքը Գյումուշխանեցին գտնում է անշուք, կիսավեր վիճակում, միաբանները ցրված։ Հնարավորության սահմանում նա նորոգում է երկու տաճարը, նոր խաչկալներ շինում, հավաքում ցրված միաբաններին և վերջիններիս հանձնելով վանքը, իր հոգար կամքով թողնում, հեռանում է Սևան ու միաբան գրվում Սևանա վանքի՝ մտադրված լինելով ընդ միշտ այնտեղ մնալու և գրական աշխատանքով պարապելու։ Եվ հենց այստեղ, Սևանում էլ նա ձեռնարկում է գրելու իր «Օրագրերը» սկսելով իր ծննդից։

Հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը երեք անգամ հրաժարվել է կաթողիկոսական կո-

լուսինք առ միայն Լորդորդ անգամն է ընդունվել նրա հրաժարականը և նրա կենդանության օրոք կաթողիկոս է ընտրվել վանքի նախկին ավագ լուսարար և Թիֆլիսի առաջնորդ Հովհաննես Կարբեցին, որը 1830 թվին էջմիածին էր եկել ընտրողական ժողովին մասնակցելու համար։ Նորընտիր Կարբեցին ցանկանալով մինչև իր հաստատումը և օծվելը մի օգնական ու խորհրդակից ունենալ, միաբաններից ընտրում է Գյումուշխանեցուն։ Կարբեցին մի երդմնագիր է տալիս Գյումուշխանեցուն, որի մեջ, ի միջի այլոց, գրել էր. «Վասն որոյ անկեղծ հոգևով առաջի ահա տրին Աստուծոյ դնեմ զվկայութիւն հաւատարիմ, կամելով զի նորին եղբայրական սիրով հաղորդակցութեամբն իցէք ընդ իս ի Թիֆլիս» և այլն։

Այսպիսով Գյումուշխանեցին թողնելով Սեանի միանձանց սուրբ ու անդորր կյանքը՝ «զհետ սրբազնութեան նորա» մեկնում է Թիֆլիս՝ Կարբեցու պաշտոնատեղին։

Այստեղ, Թիֆլիսում Գյումուշխանեցու խորհուրդները և գրությունները օգտավետ են հանդիսացել Կարբեցուն իր նպատակների իրագործման համար և Թիֆլիսեցիք անգամ նրան համարել են առաջնորդի աջ բաղուկը. ինքը Կարբեցին էլ շատ դուր է եղել, բայց հենց որ հասել է իր նպատակներին, այսինքն հաստատվել ու օծվել է Հայրապետ, իսկույն մոռացություն մատնելով նրա բոլոր ծառայությունները, հրամայել է Գյումուշխանեցուն քաշվել քաղաքի Սեյիդաբադ կոչված թաղում գտնվող ավերակ Ս. Սարգսի ուխտատեղին, վերանորոգել այն և արդյունքովն ապրել։ Գյումուշխանեցին կատարելով նրա պատվերը, չորս տարի շարունակ մնում է այնտեղ և հավատարմությամբ ամեն բան ձշտիվ կատարած լինելու համար ստանում է նրա հայրապետական վկայագիրը. (1835 թվի հունիսի 18-ին № 27)։ Իր չորս տարվա պաշտոնավարության ընթացքում Գյումուշխանեցին ամբողջ արդյունքը հավաքում, հանձնում էր երեցփոխին և նրանից օրապահիկ ստանալով ընկալագիր տալիս։ Բայց երբ կաթողիկոսն էջմիածնից Թիֆլիս է գալիս, կարգադրում է երեցփոխից առնել ամբողջ հավաքված դրամը, Գյումուշխանեցուն թողնելով առանց դրամի Վարդապետը մեծ կարիքի մեջ գտնվելով, մինչև իսկ ստիպված է լինում կայսրից նվեր ստացած իր աղամանդյա խաչը վաճառել, օրվա սնունդը հոգալու համար։ Քանիցս Գյումուշխանեցին կաթողիկոսին դիմելով խնդրում է իրեն օրական ապրուստ շնորհել, բայց միշտ էլ նրան մերժում են առաջարկելով գնալ Վարաբադ

ի վանս սրբոյն Ցակովբայ յամայի և անծանօթ տեղի»։ Վերջապես նա խնդրում է, որ իրեն կամ օրվա պարեն տրվի և կամ անձնագիր Ղրիմ՝ իր բարեկամների մոտ գնալու, որտեղ գուցե հնարավոր կլինի ապրել «ցավակից կարեօք նոցին»։

Այս վիճակում էր Գյումուշխանեցին Ս. Սարգիս ուխտատեղում, երբ Մսուր Զմյուռնացին էջմիածնից հեռանալով գալիս է նրա մոտ։ Գյումուշխանեցին ընդունում և պահում է նրան իր մոտ 1832 թվի սեպտեմբերի 6-ից մինչև 1833 թվի օգոստոսի 12-ը. «Ընդունեցինք սրան,—գրում է նա այս մասին,—և ցուցակից հանդիսանալով միմեանց, իրեն եղբայր և որդի, մխիթարում էինք իրար»։ Շուտով Մսուրը հրավիրվում է Ներսիսյան զարոց կրոնագիտության ուսուցչի պաշտոնով։

Գյումուշխանեցու «Մենարան» խցիկում Մսուրը հաճախ է քննադատել Հովհաննես Կարբեցու կողմից Թիֆլիսի հոգևոր կառավարիչներ կարգված Արղուժյան Ստեփաննոս և Մինաս Կախկոպոսների «ղարտուղի կիրան» իր և Գյումուշխանեցու վերաբերմամբ, որն ըստ Գյումուշխանեցու պատճառ է հանդիսանում Մսուրի հեռանալուն և այդտեղից։ 1833 թվի օգոստոսի 13-ին Մսուրը մի ջերմ մնաք բարովի «գիր» է թողնում Գյումուշխանեցու խցիկում և գաղտնաբար հեռանում։

Իսկ ի՞նչ է լինում ինքը Գյումուշխանեցին. ինչպես տեսանք, նա Ղարաբադ գնալ չցանկացավ, իսկ Ղրիմ գնալու էլ անձնագիր չստացավ. բայց թե ուր գնաց և ի՞նչ եղավ, դժվարանում ենք սաել, որովհետև նրա ինքնակենսագրությունը, որը միակ աղբյուրն է հանդիսանում մեզ համար, այդտեղ վերջանում է։ Այդ ժամանակ նա 68 տարեկան ծերունի էր և հավանական է, որ Թիֆլիսում մնացած ու այնտեղ վախճանված լինի։

Ուշադրության արժանի է նրա գործունեությունն էջմիածնում, երբ նա դեռ վանքի միաբան էր. Գյումուշխանեցին ծրագրել էր էջմիածնում լուսավորչական գործով զբաղվել, բայց Սինոդի և Եփրեմ կաթողիկոսի անտարբեր վերաբերմունքի պատճառով նրան չի հաջողվում իր ծրագրերից և ոչ մեկն իրականացնել։ Նշենք նրա ծրագրված այդ գործերից զխավորները, նյութը քաղելով Մսեր Մագիստրոսի «Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի» երկասիրությունից։

1829 թվին գերապատիվ հայր Մանվել վարդապետ Գյումուշխանեցին,—գրում է Մսերը,—որը ունում և իմաստություն սիրող

մի մարդ էր: գրավոր Սինոդին առաջարկել էր ազգային լուսավորության գործի համար միաբանության որոշ թվով ուսումնական անձերից բաղկացած ընկերության մի ժողովարան հաստատել, որի պարտքը պիտի լիներ ուսումնասիրել Գյումուշխանեցու սահմանած կանոնների համաձայն ազգի լուսավորության գործը հոգալ: Այդ կանոնները նա ամփոփել է հետևյալ 10 հոդվածի մեջ:

1. Պարագիլ գրավոր աշխատություններով, գրքերի ընթերցանությամբ ու դրանց իրար հետ բաղդատելու ու ուղղագրելու գործով և լույս ընծայել պատմական, բանասիրական բովանդակությամբ աշխատատիրություններ ու ուրիշ այդպիսիները ի նպաստ Աթոռի ու մեր մանուկների լուսավորության գործի:

2. Աթոռում կամ եթե հաջողվի շրջակայքի վանքերից մեկում մի պատշաճ անկյուն հատկացնել ժառանգավոր մանուկներ կրթելու համար, ղեկավարությունը և դաստիարակությունը մի ազգասեր ուսուցչի հանձնելով:

3. Սինոդի հրամանով հանձնարարել Աթոռի հետավոր ու մերձավոր առաջնորդներին, նվիրակներին և մյուս գործակալներին, որպեսզի ինչ միջոցով էլ լինի ձեռք բերեն հին ու նոր մատյաններ:

4. Իրավունք տալ հրավիրելու նաև Աթոռից դուրս ապրող եկեղեցական ու աշխարհական գիտնական անձերին, եթե այդպիսիները կոտմունք ու կցանկանան, որպեսզի, երբ որ էլ լինի, գան ու միանան իրենց:

5. Պարբերաբար, Սինոդի հավանությամբ, անդամներից մեկին կամ մյուսին ուղարկել Հայաստանի նահանգները, քաղաքները շրջելու և արձանագրություններ, ձեռագիր մատյաններ, գիտելիքների համար կարևոր զանազան տեղեկություններ, նյութեր որոնելու, գտնելու ու ձեռք բերելու համար:

6. Աթոռի գրատունը վերցնել իր տնօրինության տակ և կարգի բերել:

7. Իրենց անձն Աթոռի ժառանգության կամ քահանայության նվիրողներին նախ քննել ըստ նրանց արժանավորության, գիտության, վարք ու բարքի հանգամանքների և հետո միայն հոգևոր աստիճանների արժանացնել:

8. Հոգ տանել Աթոռի վերանորոգության մասին և նպաստավոր պարագային ձեռնարկել այն գրքերի տպագրության, որոնք անհրաժեշտ կհամարվեն:

9. Սրբագրել տպագրվելիք գրքերը, նամանավանդ հավատին ու կրոնին վերաբերողները և ապա արդեն տպագրության հանձնել:

10. Բոլոր կարևոր գեպքերում գրավոր նախադրություն տալ Ս. Սինոդին և սպասել նրա հրամանին ու հավանության:

Այս կանոններով «Ընկերության ժողով» կազմելու գրությունը նա ներկայացնում է նախ Սինոդին և հետո էլ, երբ չի բավարարվում, ներկայացնում է Եփրեմ կաթողիկոսին. բայց սա էլ Սինոդի նման որոշակի պատասխան չի տալիս:

Գյումուշխանեցին մի ուրիշ առաջարկ էլ է անում. նա տեսնում էր, որ օրըստօրե աճում են կարգապահության խախտման դեպքերը միաբանության անդամների կողմից, — եկեղեցական պաշտաման արարողությունները նրանց կողմից թերի են կատարվում, իսկ երբեմն էլ իսպառ չեն կատարվում. և այդ բոլորը տեղի էր ունենում այն պատճառով, որ միաբանները առավոտյան վաղ գնում էին վանքի անդ ու անդաստանը, այդինները, բանջարանոցները մշակելու: Նա համոզում է Սինոդին բոլոր այդպիսի գործերը կիսովի կատարելու պայմանով հանձնել վաղարշապատի գյուղացիներին, որպեսզի միաբանները դաշտային աշխատանքներից ազատվելով հնարավորություն ունենան իրենց կրոնական պարտականությունները կատարելու: Որոշվում է հարցնել իրենց միաբանների կարծիքը, թե ո՞րը նրանք կգերադասեն, կրոնական-հոգևոր գործերին ծառայելը, թե՞ վանքի հողերը մշակելը. միաբանների մի մասը հավանություն է տալիս կրոնա-հոգևոր գործին ծառայելուն, մյուս մասը հողերը մշակելուն: «Եվ այսպես, — ասում է Գյումուշխանեցին, — չը թուեցաւ նոցա հաճոյ զնոյն զհին կապերտն յանձնէ ի բաց թոխսիս»:

Երբ այս երկու փորձը չի հաջողվում, Գյումուշխանեցին մի երրորդ և վերջին փորձն էլ է անում: Նա խնդրում է Սինոդին վերաբացել Աթոռի վարժարանը, գործի դնել տպարանը և դրանց վերակացության պաշտոնն իրեն հանձնել: Սինոդը պատասխանում է, որ Աթոռն ի վիճակի չէ վերահաստատելու իր դպրոցը:

Ինկատի առնելով, որ Մսուրն իր վերջ հիշված «գրի» մեջ թողել է մեզ Գյումուշխանեցու, իբրև բարի մարդու և ավիտարանի ճշմարիտ աշակերտի, փայլուն նկարագիրը, որի օգնությամբ, նրա համառոտ կենսագրության ծանոթանալուց հետո, կարող ենք որոշ չափով գաղափար կազմել նաև նրա ներքին հոգևոր-բարոյական արժանիքների մասին, ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել Մսուրի այդ «գիրը», բնագրի գրաբարը վերածելով աշխարհաբարի:

**ԴԵՐԱՊԱՅԻՆ ԴԵՐԵՄԱՍՏ ՄԱՆՎԵԼ ՆԱՅԻՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ԲԱԶՄԵՐԱՆՏ ՆԱՅԻ ՇՈՂԵՎՈՐ**

«Ահա հասավ ժամանակը, որ ես իմ սրտից բխած խորհուրդները ոչ օդածայն լեզվախոսությամբ հայտնեմ Ձեզ, ինչպես որ անում էի երեկ և մյուս օրը, այլ բարավ լեզվիս թերությունը գրչիս միջնորդությամբ լրացնեմ:

«Ես աղատիկ Մսուրս, անուշադիր, անօգնական բողևված ամենօրյա, միայն Ձեր պաշտպանության հարկի տակ ապաստարան գտա: Ով Աստուծո կանխաաման տնորհություն: Ի՜նչպիսի փառք հայացով, ի՜նչպիսի զգվալի գորովանով Դուք հանեցիք խնամել ինձ, անարժանավորիս: Մի՞թե Դուք դրա համար ինձանից մի որևէ փոխհատուցում էիք ակնկալում, ո՛չ, քա՛ղվ լիցի, ո՛չ երբեք, այս ինչո՞ւ համար — այդ նշանակում էր հետևող լինել ավետարանական ուսմանին: — «Որովհետև այդ արիք մեկին, եղբայրներից փոքրագույնին, ինձ արիք»:

«Խոստովանում եմ, Տեր բարեբար, մարդկանց և իմ մարդացած Աստուծո առաջ, որ այնպես չզգվեցա իմ մորից, բարեգութ հոգից, որքան կարողացա մխիթարություն գտնել Ձեզներից հոգուս մեջ: Ինձ, տկարիս, Աստուծոյան գահը, այսինքն էջմիածինն իր ծոցի մեջ այնպես շամփոփեց, ինչպես ինձ համար Ձեր պատրաստած «Մենարան» ցանկայի խցիկը:

«Այո՛, մեծ եղավ, միանգամայն անվճար»

ԳՅՈՒՄՈՒՇԵԱՆՆՑՈՒ ԹՈՂԱՍ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1. «Ի վերայ ուղիղ Յունուարի 6 ծննդեան և մկրտութեան Տեառն մերոյ և նազակատեաց գիշերոյ յարուսթեան Քրիստոսի, 1803 թ.»:
2. «Կշիւս գրութեանց Պալատորոցի Յո՛հաննէս պատրիարքի, 1803 թ.»:
3. «Ընդդէմ հրաւէր տետրակին», 1804 թ.
4. «Փորձաքար» կոչեցեալ տետրակն ընդդէմ տպիւղ տետրակին Լևոն փափին»:
5. «Լուծ նախնոյ մերոյ ի վերայ պահոց առարկութեանց»:
6. «Ճակչէտ դիտելեաց»:
7. «Կարգ կաթողիկոսացն», որ հաւաքեցան յերից հատորոցն Չամչեան պատմութեանց, որք գտանն առ Չմյուռնացի ուսումնատենչ Մսուր Դրիգորեան և յայլ տեղիս»:
8. «Ինկիթապի և թիւրակէս» ընդդէմ վարդապետութեան հաշտութեան անուանեալ տետրակին, տպեցելոյն ի Կալկաթայ ի 1832ամի:

Բայց նրա գրվածքների մեջ ամենազվազուրու և աչքի ընկնողը պետք է համարել նրա «Օրագրութիւնները», որ, ինչպես տեսանք, գրել է Սևանում: Վերջին ժամանակներս նրա ինքնաձեռագիր օրինակը գտնվել է էջմիածնի միաբան հայտնի Աբել արքեպիսկոպոսի մոտ. 1875 թվին մի օրինակն էլ գտնվել է մի բանասեր անձի ձեռքին, որը տպագրել է Զարմայր Մսերյանի «Փարոս»-ի 1875 թվի 7 տետրակում, որից և օգտվել ենք մենք մեր այս հոդվածի համար:

Երևի, միաժամանակ և անմոռանալի Ձեր մարդկային ուժերից վեր ինձ մատուցած լավության երախտիքը, որը մոռանալ, նշանակում է Ամենաբարի Աստուծուն մոռանալ:

«Հայրական սե՛րը, գո՛ւրը, խնա՛մքը, որ Դուք ցույց տվիք ինձ սմեն դեպքում. պատճառն զնում իմ վրա միե՛նչ կյանքիս վերջին շունչը միշտ աղօթող մնալ Ձեր արդյունավաստակ կյանքի երկարության համար և խնդրել իբրև հավիտենական բարիքի փոխարինություն, նրանից, որ մի բաժակ սառը ջուր տվողին անգամ խոստացավ անվերադարձնելի չորոնել վարձը: Նա է, որ ստում է «Քաղցեալ էի և ետուք ինձ ուտել, ծարաւի և արքուցիք, մերկ և զգեցողիցիք»:

«Տեր, բոլ այս կե՛նա՛ և մնա՛ քո առաջ իբրև իմ նրախտագիտության արձանը: Ի՞նչ լեզուս ծանրաշարժ է, բայց ոչ գրչիս, որովհետև ես նմանում է նարտար խոսողի լեզվին, որպես և «Մարգարէի լեզու գրչի արագագիւր դարի»:

«Մեա՛ք բարյավ, մնացե՛ք խաղաղությամբ հայր, Ձեր մեծ եղած Լոյբայրների և որդիների հետ»:

Մնամ Ձեր բազմեռախտ հայրության նվաստ ծառա և հետին որդակ

Մսուր Դրիգորյան Չմյուռնացի»:

1833 թ. օգոստոս 13

Տփլիս

Դրանից էլ ավելի-կարևոր է Գյումուշխանեցու «Պատմութիւն անցից անցելոց Սեանայ», որ նույնպես գրված է Սևանում 1830 թվին: Դրա ինքնաձեռագիր օրինակը մինչև վերջին ժամանակներս պահվում էր Սևանում, որտեղից վաճառի մյուս 7 կարևոր ձեռագիր մատյանների հետ բերվել է Գրական թանգարան, իսկ այժմ գտնվում է Հանրային գրադարանի ձեռագրերի բաժնում 7554 համարի տակ: Առաջին անգամ սա տպագրվել է Ս. էջմիածնի տպարանում 1871 թվին: